ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԿՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«12» 12 2011 N 60-Հ.
օր.N

«06» փետրվարի 2012
N
օր. N 162-Ա

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի N1500-Ն որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ «Ծառայություններ»), իսկ ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն վճարում է այդ Ծառայությունների դիմաց սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

2.1 Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը:

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը:

2.3 ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգության ապահովման համար միջոցառումներ ձեռնարկել՝ տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով:

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո:

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ՏԿՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքներն ապահովել՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման համար պահանջների:

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման համար պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները:

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը:

.../2

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային ամսական վարձի վճարումը ոչ ուշ քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը համաձայն ՀՀ կառավարության 22.09.2011թ. N1500-Ն որոշման: Վճարումները կատարվում են դրամով հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	Կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	Ընդամենը տարեկան վարձը		325 000
4.			Երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը տեխնիկապես սարքին վիճակում Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո.

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատճառված կապի միջոցների արժեքի փոխհատուցումը ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

3.8 Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի առ 13.03.2009թ N24-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ ՖՆ գանձ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 01507079
հ/հ 900018301911

_______________ Գ. Հակոբյան

ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

ք. Երևան, Վարդանանց 13,ա.
ՀՀ ՖՆ գանձ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 02555816
հ/հ 90001156...

_______________ Ա.Անդրեասյան

Կառավարական կապի և տեղեկատվության վարչության _______________ հեռախոս 1-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2016 թվականի N 1038-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1516-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 6-րդ կետից հանել «և Ջրային տնտեսության պետական կոմիտեից» բառերը,

բ. 7-րդ կետի «ժդ» և «ժե» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշման N 2 հավելվածի «III. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում պետական մարմիններ» բաժնից հանել «Ջրային տնտեսության պետական կոմիտե» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ վերանվանելու, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 654-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «էներգետիկայի և բնական պաշարների» բառերը և իրենց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» բառերով և իրենց համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 6-րդ կետը «աշխատակազմից,» բառից հետո լրացնել «նախարարության կառավարման ոլորտում գործող Ջրային տնտեսության պետական կոմիտեից» բառերով,

բ. 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-րդ և 17-րդ ենթակետերով.

«16) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման ապահովումը.

17) ջրային համակարգերի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը:».

3) որոշման N 2 հավելվածը «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ բաժնով.

«III. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կառավարման ոլորտում պետական մարմիններ

Ջրային տնտեսության պետական կոմիտե»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 1400-Ն որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «գյուղատնտեսության» բառը և իր համապատասխան հոլովաձևերը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» բառերով և իրենց համապատասխան հոլովաձևերով:

4. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համատեղ, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պահպանման ծախսերի վերաբերյալ առաջարկություն.

2) ստեղծել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի գույքի փոխանցման հանձնաժողով՝ վերջինիս կազմում ներգրավելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ներկայացուցիչներին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Կ. Կարապետյան**

2016 թ. հոկտեմբերի 14
Երևան